

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Սույն թվականի մայիսի 11-ին Գեղարքունիքի մարզում անցկացված «Իմ քայլը հանուն Գեղարքունիքի մարզի» ներդրումային բիզնես համաժողովին մասնակցել են շուրջ 350 մարդ:
2. Ներդրումային բիզնես համաժողովին ներկայացվել է թվով 50 տարբեր ոլորտի (գյուղատնտեսական, զբոսաշրջային, կաթնամթերքի արտադրության և այլն) ներդրումային ծրագրերի փաթեթներ, որոնց մեջ եղել են, ինչպես հաջողված և ընթացիկ, այնպես էլ նոր նախատեսվող ծրագիր առաջարկներ:
3. ՀՀ Գեղարքունիքի մարզում անցկացված «Իմ քայլը հանուն Գեղարքունիքի մարզի» ներդրումային բիզնես համաժողովի վերաբերյալ ամբողջական փաթեթը տեղադրված է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքէջում՝ <http://geggharkunik.mtad.am/imqayl/>:
4. ՀՀ Գեղարքունիքի մարզից շուրջ 28 ներդրումային ծրագրերի փաթեթներ ուղարկվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ ներդրումային հարթակում տեղադրելու նպատակով:
5. ՀՀ Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր համայնքում «Իմ քայլը հանուն Գեղարքունիքի մարզի» ներդրումային բիզնես համաժողովի շրջանակներում ստեղծվել է ոչխարաբուծական ֆերմա, որտեղ մեկնարկել է ոչխարաբուծական խոշոր ծրագիր, և հավակնում է խթանել նաև ոչխարաբուծության արագ զարգացմանը մարզում: Ոչխարաբուծական նորաստեղծ տնտեսության ղեկավարն է Լանջաղբյուր գյուղի բնակիչ, անհատ ձեռներեց Արսեն Մարգարյանը: Ծրագիրն իրականացվում է Ռուսաստանաբնակ գործարարներ Սերգո Բազեյանի, Վազգեն Նավոյանի համատեղ գործակցությամբ: Ռուսաստանի Դաշնությունից Լանջաղբյուր է տեղափոխվել 230 գլուխ ոչխար, որոնցից 13-ը խոյեր են, մնացածը՝ մաքիներ: «Ոչխարաբուծական ծրագիրը նախատեսում է ունենալ մինչև 4000 գլուխ հոտ, որից մինչև 1200-ը կկազմեն մայրերը, մնացածը՝ գառները: Գործարարները Ռուսաստանից մարզ են ներկրել են «Ռոմանովսկիե» ցեղատեսակի ոչխարները, որոնք ունեն բարձր գառնատվություն: Անհատ ձեռնարկատերը նախատեսում են նաև ձեռնարկատիրական հեռանկարային ծրագրեր, որոնք ոչ միայն խթանելու են անասնամթերքի իրացմանը, այլ նաև մանվածքաբանական արտադրության զարգացմանը, ինչպես նաև նոր աշխատատեղերի ստեղծմանը: Գործարարները ծրագրում են ֆերմային կից տարածքում ունենալ սպանդանոց, որտեղ կարող են սպանդի համար ընդունել նաև շրջակա համայնքի տնտեսությունների անասունները: Ստեղծվելու է նաև բրդի մթերման ու վերամշակման արտադրամաս, որտեղ մթերվելու է մարզի տնտեսություններում արտադրված բուրդը: Արտադրական տարածքում լինելու է նաև կարի արտադրամաս, որտեղ կարող է ընդունվել կարի համապատասխան պատվերներ: Ի դեպ, սույն ծրագիրը ներկայացվել է «Իմ քայլը հանուն Գեղարքունիքի մարզի» տնտեսական համաժողովում ու առաջիններից մեկն է, որ բարեհաջող կյանքի է կոչվում: